ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____ 2024 թվականի №____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի №79Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի օգոստոսի 30-ի №56Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանները հաստատելու մասին» №79Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների №1 հավելվածում (այսուհետ՝ №1 հավելված) կատարել հետևյալ լրացումները.

1) №1 հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունում «բայց 6426-ի» և «80 տոկոսից ոչ ավելի չափով» բառերից հետո լրացնել «(ճշգրտված՝ սույն մեթոդիկայի 5.1-ին կետին համապատասխան հաշվարկված գործակցով)» բառերը.

2) №1 հավելվածի 5-րդ կետում «բայց 6146-ի» և «85 տոկոսից ոչ ավելի չափով» բառերից հետո լրացնել «(ճշգրտված՝ սույն մեթոդիկայի 5.2-րդ կետին համապատասխան հաշվարկված գործակցով)» բառերը.

3) №1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին և 5.2-րդ կետերով.

«5.1. Սույն մեթոդիկայի 4-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված աշխատողների թվաքանակի, ինչպես նաև նորոգման և նյութական ծախսերի առավելագույն մեծությունները ճշգրտվում են հետևյալ բանաձևով որոշվող գործակցով.

$$K_{\text{Սպ}2025} = \frac{\text{ՍՔ}_{2024}}{(\text{ՍՔ}_{2016}+\text{ՆՄ}_{2016}*9)} * \alpha + (1-\alpha\ ),\ \text{որտեղ՝}$$

1) **$K_{\text{Սպ}2025}$-ը** 2025 թվականի փետրվարի 1-ից սկսվող հաշվարկային տարվա համար էլեկտրական էներգիայի սպառողների թվաքանակի նախատեսվածի համեմատ ավել աճով կամ նվազմամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի, նորոգման և նյութական ծախսերի փոփոխությունը հաշվի առնող գործակիցն է,
2) **ՍՔ_{2024}-ը** 2024 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Բաշխման ցանցին փաստացի միացած սպառողների թվաքանակն է,
3) **ՍՔ_{2016}-ը** 2016 թվականի սկզբին Բաշխման ցանցին փաստացի միացած սպառողների թվաքանակն է,
4) **ՆՄ_{2016}-ը** 2016 թվականի ընթացքում Բաշխման ցանցին փաստացի նոր միացած սպառողների թվաքանակն է,
5) **α-ն** աշխատողների թվաքանակի, նորոգման և նյութական ծախսերի՝ սպառողների թվաքանակից կախված փոփոխական մասը հաշվի առնող գործակիցն է, որը աշխատողների թվաքանակի դեպքում ընդունվում է 0.85, իսկ նորոգման և նյութական ծախսերի դեպքում՝ 1:

5.2. Սույն մեթոդիկայի 5-րդ կետում նշված աշխատողների թվաքանակի, ինչպես նաև նորոգման և նյութական ծախսերի առավելագույն մեծությունները ճշգրտվում են հետևյալ բանաձևով որոշվող գործակցով.

$$K_{\text{Սպ}2028} = \frac{\text{ՍՔ}_{2027}}{(\text{ՍՔ}_{2016}+\text{ՆՄ}_{2016}*12)} * \alpha + (1-\alpha\ ),\ \text{որտեղ՝}$$

1) **$K_{\text{Սպ}2028}$-ը** 2028 թվականի փետրվարի 1-ից սկսվող հաշվարկային տարիների համար էլեկտրական էներգիայի սպառողների թվաքանակի նախատեսվածի համեմատ ավել աճով կամ նվազմամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի, նորոգման և նյութական ծախսերի փոփոխությունը հաշվի առնող գործակիցն է,
2) **ՍՔ_{2027}-ը** 2027 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Բաշխման ցանցին փաստացի միացած սպառողների թվաքանակն է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
__ _____ 2024թ.